


Ի՞նչ է տեղի ունենում այս պահին կապիկի ծաղկի հետ 2022 թվականի մայիսի 13-ից սկսած՝ արձանագրվել են կապիկի ծաղկի բռնկման դեպքեր մի քանի երկրներում, որտեղ դրանք սովորաբար չեն հանդիպում: Վերջին դեպքերը չեն արձանագրել կապ վարակված կենդանիների հետ կամ ճանապարհորդություն այնպիսի տարածք, որտեղ այս հիվանդությունն ավելի տարածված է: ԱՄՆ-ի բազմաթիվ տարածքներում՝ ներառյալ Կալիֆոռնիայում, հայտնաբերվել են վարակման դեպքեր:

**ԵԹԵ ԿԱՐԾՈՒՄ ԵՔ, ՈՐ ԿԱՐՈՂ ԵՔ ԿԱՐԱԿՎԱԾ ԼԻՆԵԼ ԿԱՊԻԿԻ ԾԱՂԻԿՈՎ, ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԿԱՊ ՀԱՍՏԱՏԵԼ ՁԵՁ ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՍՄԱԴՐՈՂԻ ՀԵՏ:**

**ԵԹԵ ՉՈՒՆԵՔ ՁԵՁ ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՍՄԱԴՐՈՂ ԿԱՍ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԶԱՆԳԱՀԱՐԵՔ 2-1-1 ԿԱՍ ԱՅՑԵԼԵՔ ՁԵՁ ՍՈՏԻԿ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԼԻՆԻԿԱ:**

ՄԿԱՆԱՎՈՐԵՔ ԱՅՍՏԵՂ՝ ՄԵՆԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԼԻՆԻԿԱ ԳՏՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ



Կապիկի ծաղկի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք [ph.lacounty.gov/media/Monkeypox/](http://ph.lacounty.gov/media/Monkeypox/) (Armenian) Revised 6/30/2022

**Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱՔ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԿԱՊԻԿԻ ԾԱՂԻԿԻ ՄԱՍԻՆ**



**Հիմնական Տեղեկություններ**

- Կապիկի ծաղիկը հեշտությամբ չի փոխանցվում մի մարդուց մյուսին:
- Ներկայումս չկա հաստատված բուժում հատուկ կապիկի ծաղիկ վիրուսի դեմ, սակայն կարող են օգտագործվել որոշ դեղամիջոցներ՝ ախտանիշների թեթևացման համար:
- Կապիկի ծաղիկը կանխելու համար խուսափեք այն կենդանիների կամ մարդկանց հետ շփումից, որոնք կարող են կրել վիրուսը, խուսափեք այնպիսի նյութերի հետ շփումից, որոնց հետ շփվել է հիվանդ կենդանին կամ անձը, և վարակված կենդանիների կամ մարդկանց հետ շփվելուց հետո ապահովեք ձեռքերի լավ հիգիենա:

**Ի՞նչ է կապիկի ծաղիկը**

Կապիկի ծաղիկը հազվադեպ հանդիպող հիվանդություն է, որն առաջանում է կապիկի ծաղիկ վիրուսով վարակվելու հետևանքով, որը կարող է ձեռք հիվանդացնել: Այն սովորաբար հանդիպում է ԱՄՆ-ից դուրս, սակայն վերջերս Կալիֆորնիայում և Լոս Անջելեսի Շրջանում գրանցվել են կապիկի ծաղիկով վարակման բազմաթիվ դեպքեր:



**Ինչպե՞ս է տարածվում կապիկի ծաղիկը:**

Կապիկի ծաղիկը կարող է տարածվել, երբ անձը սերտ շփում է ունենում կապիկի ծաղիկ վիրուսով վարակված մարդու հետ կամ երբ անձը շփվում է վիրուսով աղտոտված նյութերի հետ (օրինակ՝ սպիտակեղեն, սրբիչներ): Կապիկի ծաղիկ վիրուսը կարող է փոխանցվել նաև կենդանուց մարդուն:

**Կապիկի ծաղիկ վիրուսը կարող է տարածվել՝**

- Դիպչելով անձի մաշկի այն հատվածին, որն ախտահարված է կապիկի ծաղիկ վիրուսով
- Դիպչելով աղտոտված առարկաներին, գործվածքներին (հագուստ, անկողնային պարագաներ, սրբիչներ) և մակերեսներին, որոնց հետ շփվել է կապիկի ծաղիկով հիվանդ անձը
- Շփվելով կապիկի ծաղիկով հիվանդ մարդու շնչառական կաթիլների կամ աչքերի, քթի և բերանի արտազատուկների հետ

**Կապիկի ծաղիկ վիրուսը կանխարգելելու համար անձը պետք է խուսափի՝**

- Բերանային, հետանցքային և հեշտոցային սեռական հարաբերությունից կամ կապիկի ծաղիկով հիվանդ անձի սեռական օրգաններին կամ հետանցքին դիպչելուց
- Կապիկի ծաղիկով հիվանդ անձի հետ գրկախառնվելուց, նրան մերսելուց, համբուրվելուց կամ նրա հետ մոտ հեռավորությունից խոսելուց
- Այնպիսի գործվածքներին, մակերեսներին և առարկաներին (օր.՝ սեռական խաղալիքներ) դիպչելուց, որոնք օգտագործվել են կապիկի ծաղիկով հիվանդ անձի կողմից:

**Որո՞նք են կապիկի ծաղիկ նշանները:**

Վաղ նշանները կարող են ներառել ջերմություն, թուլություն (ընդհանուր անհանգստություն), գլխացավ, ավշային հանգույցների այտուց և երբեմն հազ կամ կոկորդի ցավ: Այլ ախտանիշները ներառում են մկանային ցավեր, մեջքի ցավ, դող և սաստիկ հոգնածություն, որին հաջորդում է ցանը, որը սովորաբար առաջանում է դեմքին և տարածվում մարմնի այլ մասեր: Վարակները կարող են տևել երկուսից չորս շաբաթ: Իսկ որոշ մարդկանց մոտ առաջանում է ցան՝ ավշային հանգույցների այտուցմամբ կամ առանց դրա, որը կարող է լինել սեռական օրգանների շրջանում:



**Ջերմություն և Գլխացավը**



**Մկանների Ցավ**



**Ցան, Բշտիկներ Կամ Ուռուցքանման Գոյացություններ**



**Ավշային Հանգույցների Այտույց**



**ԲՈՒԺՈՒՄ ԵՎ ՊԱՏՎԱՍՏՈՒՄ**

Այս պահին չկան հաստատված բուժումներ հատուկ կապիկի ծաղիկ վարակների համար: Այնուամենայնիվ, դեղամիջոցները, ինչպես օրինակ՝ հակավիրուսային դեղերը, կարող են օգտագործվել հիվանդության ախտանիշները թեթևացնելու համար: Որոշ դեպքերում պատվաստումը կարող է կիրառվել կապիկի ծաղիկ վիրուսի հետ շփվելուց հետո հիվանդանալը կանելու համար: Խնդրում ենք քննարկել հասանելի բուժման տարբերակները ձեզ բժշկական ծառայություններ տրամադրողի հետ: